

Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Արձանագրությունը երկար ժամանակ, կարելի է ասել հարյուրամյակներ, գտնվել է բաց տեղանքում (բերդի մուտքի մոտ, որի ավերակները դեռ նրկատելի են), ուստի մամռակալել է, իսկ տեղ-տեղ էլ հողմնահարվել: Այնուամենայնիվ, պահպանվել է առանց շատ մեծ վնասվածքների և հնարավոր է վերծանել: Ակադ. Ա. Շանիձեն հիմնականում կատարել է այն, պայմանական կամ թեական որոշ ընթերցումներով, միաժամանակ դիտելով, որ գիտական ուսումնասիրության համար անհրաժեշտ է մաքրել քարը⁴: Ուստի նա արձանագրության բովանդակության հետ կապված պատմա-բանասիրական բնույթի որոշ հարցադրումներ է կատարել, չանդրադառնալով նրանց քննությանը: Գնահատելով այս նորահայտ արձանագրության նշանակությունը, Ա. Շանիձեն դրում է. «Հին բերդեր մեզանում շատ կան, սակայն նրանց ար-

⁴ Նույն տեղում, էջ 22, 26:

ձանագրությունները չեն պահպանվել։ Առավել ևս ուշագրավ է Բարանայի բերդի արձանագրությունը, որը հին շրջանի համար միակն է»¹։

Քանի որ արժարժված հողվածում տրված են արձանագրություն ունեցող քարի նկարագրությունն ու հանդամանքները, ինչպես նաև անվերապահորեն հավաստի ընթերցումների պատճառաբանությունը, այլևս անհրաժեշտ չենք համարում անդրադառնալ հիշյալ խնդիրներին, եթե անգամ որոշ պատճառաբանություններ թեական կամ վերանայելի ենք համարում։ Մեր հիմնական խնդիրն է՝ արձանագրության աղբյուրագիտական քննությունից առաջ անդրադառնալ վերծանության մեջ թեական համարված բառերին ու դարձվածքներին, իսկ գլխավորը՝ ճշգրտել առանձին բառերի ընթերցումը։

Տող 1. Շանիձեն ճիշտ է նկատել, որ շորորդ նիշը Ս—է և ոչ՝ Յ, իմա՝ օյ։ Հապավված անձնանվան վերջում դրված բառանշատիչ երկու կետերը, միմյանց մոտիկ փորված լինելու պատճառով, կոտրվածքով միացել են։ Արձանագրության այլ տողերում ևս կա . և ամենուր աջ ելուստի՝ հիմնական ստեղին միացնող սյունագիծը ընդհանուրին հավասար փորվածք ունի։ Կասկած չի հարուցում նաև նույն տողի ծալված տառաշարքը, որին հետևում են օ-ին հատուկ տառահետքեր (նկատելի է փորվածքի ուղղությունը)։ Եվ քանի որ երկու տառանիշերն էլ խիստ ինքնատիպ են, կարելի է վստահ լինել ընթերցանության մեջ և առանց կասկածանքի վերականգնել և հաջորդը՝ Ն-ն։ Վերջին տառանիշից դիտելի է միայն ստորին ձախ բոլորակը։ Բառանշատիչ երկու կետի տեղագրությունից երևում է, որ տառանիշը աջակողմյան ստեղ չի ունեցել, որ նորից Ն-ին է բնորոշ (Ն, Լ, Յ տառեր ենթադրելը այս պարագայում անկարելի է, որովհետև նրանք վերին ձախ ելուստ կամ բոլորակ են ենթադրում, որ չկա)։ Ահա -ծալված կարգալուց հետո ինքնին վերականգնելի է դառնում և բառակերպի տառը. նրանից պահպանվել է ձախակողմյան ստեղ-փորակը, որի ներքևի մասում թեքությունը որոշակի է, իսկ վերևում՝ ընդհակառակը, ուղղագիծ է դառնում։ Պահպանվել է և վերին հորիզոնական գծիկը, որը իբրև սույն արձանագրության մեջ օ-ի գրության ինքնատիպություն, միացման կետից ձախ քիչ է շարունակվել (համտ. երրորդ տողի լճ-ն, տճ-ն)։ Արդեն բառի հիմնական մասը վրաց իրականության մեջ այնքան հայտնի անուն է մատնացուցում և այնքան եղակի, որ «ծալված-ից բացի ուրիշ որևէ ընթերցում անհնար է առաջարկել, մանավանդ, երբ տողի շարունակությունից տեղեկանում ենք, որ խոսքը ամիրսպասալարի մասին է։ «Իվանե ամիրսպասալար» ունենալուց հետո երեք հնարավոր թեկնածություն կարելի է առաջարկել՝ Օրբելի, Մխարգրձելի և Աբուլեթի որդի։ Առաջինը բացառվում է -ծալված ունենալու պատճառով, երկրորդը՝ ոչինչ ընդհանուր չունի առկա տառախմբի հետ (եթե չասենք նաև, որ վրաց Դիմիտրե թագավորի օրոք Իվանե Նրկայնաբազուկը կամ չէր ծնվել, եթե խոսքը Դավիթ Շինարարի որդի Դիմիտրեի մասին է և կամ վաղուց արդեն մահացած էր, եթե խոսքը Դիմիտրե Ջ-ին է վերաբերում)։ Հաջորդ բառը վատ է պահպանված, բայց տեղում են բառանշատման կետերը, որոնց արանքում չորս տառանիշ կա։ Վերջին երկու տառը ՁՅ է, պատվո նշանով (ուրեմն՝ Ձ(ձ)Յ), որ անվանական հոլովի վերջավորությունն է (Ձյ օցձնց... Ձձ)։ Մնում է պարզել մեկ հարց. սկզբի երկու տառանիշը ինչ պետք է կարդալ՝ ժձ, Ձձ, թե ժյ։ Առաջինը բա-

¹ Նույն տեղում, էջ 26։

ցատկում է, քանի որ ԾԾԾ-ի (Ծծածն) դեպքում պիտի ունենայինք և երկ-
րորդ Ծ, որ չկա, առաջին Ծ-ի վրա հապավման նշան, որ չկա, Ծ-ի ստորին
բոլորակի դուրսթյան որեէ հետք, որ նույնպես չկա: ԾԾ-ի դեպքում (իմա
Ծածածն), բացի թվարկած ունենալիքներից, ոպառեւի էր առաջին Ծ-ի վերին
հորիզոնական ելուստ, որպիսին չի եղել և չկա: Ուրեմն, միակ բնականոն
և առկա տառահանքերով թելադրվող ընթերցումը ԾցԾն-ն է (իմա Ծցծն):
Բավականաչափ շոշափելի է ց-ի վերին մասը:

Այսպիսով, აბულეთის օգმ(ა)ნ ընթերցումը ღათ ამხნაჟნი ჩრական է,
և հիჟნადიორ კასაკაბანგჩ აოჩჩ კონხნგ:

Հաջորդ բառից որոշակի կարդացվում է ձ[] օտձձձ6 տառաշարքը, երկու կողմերից կետերի մեջ առնված, թեև ոչ բոլոր տառերը լիովին անխաթար Այսպես, առաջին ձ-ից՝ պահպանվել են վերին և ստորին հատկանշական մասերը, երկրորդ ձ-ից՝ խիստ որոշակի ստորին մասը, մյուս տառանիշների քայքայված տեղերի պատկերը մակաբերվում է փորվածքի ու կոտրվածքով փոսացող հետքերով: Մասնավոր վերականգնման կարիք է զգում երկրորդ տառանիշը, որի տեղը վերևում անկյունավոր փակագծերով է նշված: Օ-ի և Ծ-ի արանքում հաստատապես ինչ-որ գիր կա. այդ երևում է և՛ տառահետքով, և՛ մասնավանդ հիշյալ երկու նիշերի արանքում մնացող տարածությունը: Բարեբախտաբար, ստեղծներին հարող քարի հարթակը խիստ քայքայված չէ և կարելի է կռահել, թե տառապատկերի փորվածքը ի՞նչ ուղղություն կարող էր ունենալ. ակներև է մեկ վերձիգ ստեղծի հետք, վերևում ուղղանկյան տակ ձախ թեքվող ելուստով: Ասոմվթարուլի գրչության միայն երկու նիշ կարող էր այսպիսի կառուցվածք ունենալ՝ օ-ն և ծ-ն: Երկրորդը բացառվում է այն պարզ պատճառով, որ ստորին աջ մասում փորակ պետք է ունենար, իսկ քարի վրա նման փորակի ոչ մի հետք չկա և դեռ ավելին, չկա և տարածք այդպիսին փորագրած լինելու համար: Ուրեմն՝ միակ հնարավոր վերականգնումը օ-ն է, որով կունենանք օտձձձ6, բացելով հապավումները՝ օտձձձձձ6, Ա. Ծանիձձն և Վ. Յիսկարիշվիլին փաստորեն ճիշտ են վերականգնել բառը (օտձ) ձձ6, վրիպելով երկու խնդրում՝ չնկատելով օ-ն և նախավերջին ձ-ի հապավումը ցուցող նշանը: Որ այստեղ իրոք պաշտոն-տիտղոս նշանակող տերմին պետք է ունենանք, թելադրվում է և արձանագրության սկսվածքի իմաստով. «Ես՝ Իվանն Արուսեթի որդիս, [. . . ս] և ամիրսպասալարս...»: «Եվ ամիրսպասալարս» կարող ենք ունենալ միայն այն դեպքում, երբ նախորդող բառը ևս համաբնույթ տերմին է և նույն «իրեն՝ Իվանեին» վերաբերող⁸:

⁶ Ա. Շանինսկի խոսքերով՝ «Կ. Ցիսկարիշչիկուն այս [ընթերցումը] կասկածելի է թվում, Ոչ էլ ես եմ համոզված, որ այսպես լինի, բայց որևէ այլ բան պակաս ենթադրելի է» (նույն տեղում, էջ 23)։

7 Նույն տեղում, էջ 22, 23:

8 Վրացերեն անոմալիան-ի առկայությունը առանձնապես բացահիվ երևույթ է. միջ հետո ու-ի կամ ձ-ի հավելման դեպքեր յայուր էլ կան: Երուսաղեմի ս. Պալ վանքի ՀՀայտավուրդի հիշատակադրություններից մեկում, օրինակ՝ Դաս-ո-ի փոխարեն ունենք Դաձևո (ց. 8 ց ր ց ց ց ց ց ց ց ց, Սասնաղծի օրդախաղովնի լարտ. քաղ. ուտտրոնիստցիս, տծ., 1962, ցց. 99): Հավելադրության նման օրինակներ կան և հայ մատենադրության հուշարձաններում (օրինակներ տե՛ս Կ. Մարք, Сборники притч Вардана, I, 162—169, նակ Լ. Գյուրուրուդադյան, Հայերենի ուղղագրությունը ե-թ դարերում (Հիաների Երևանի համալսարանի, 1971, № 3, էջ 98—108), հմտ. նույնի՝ X—XVII դդ. հայերենի

Տող 2. առկա վերծանությանը որևէ ավելացնելիք-փոփոխելիք չունենք, միայն անհրաժեշտ է դիտել, որ ՄՅՅՈԼՈՐ բառի մեջ, ինչպես երևում է, փորագրողը նախապես սխալ է թույլ տվել՝ կլորացնելով ստորին աջ փորակը, որով տառանիշը Լ-ի է վերածվել, ինքն էլ ղգացել է այդ, բայց այլևս ուղղելու ելք չի եղել Ակադ. Ա. Շանիձեի արդարացի դիտողությամբ՝ ՄՅՅՈԼՈՐ կամ ԺՅՅՈԼՈՐ-ն ուշին է, մանավանդ, որ, կավելացնենք մենք, առաջին դեմքով դրված բայը անխտիր դեմքի ցուցիչ պետք է ունենար՝ հանձին Յ-ի⁹։

Տող 3. նախորդ տողի վերջին բառի շարունակությունը կաղմող -եյ-ից (Յ/եյ)¹⁰ հետո երկու կետ է և ապա, ըստ առկա վերծանության՝ օջՅ (իմա՝ օջՅՈԼՈՐ—վերցրի)։ Ուսումնասիրությունից պարզվում է, որ վրիպում է տեղի ունեցել Լ-ն կարգալիս. վերջինիս դեպքում պիտի ունենայինք զուգահեռաբար վար իջնող երկու ստեղծ, մինչդեռ աջ ստեղծը պարզորոշ իջնում է մինչև տողի կեսը և ավարտվում, իսկ ձախ ստեղծը ստորին տողագծին հասնելուց հետո բեկվում է դեպի աջ և աստիճան կաղմում։ Հստակորեն ուրվագծվում է ասոմթավրուլի Յ-ն, որով բառը դառնում է օջՅՈ (իմա՝ օջՅՈ—կերտեցի, կառուցեցի)։

Տող 4. գրեթե ամբողջությամբ լավ պահպանված տառաշարքեր են, և վերծանությունն էլ առանձնապես դժվարությունների չի հանդիպում։ Վրիպում է տեղի ունեցել երրորդ բառը կարգալիս. վերծանության մեջ ունենք ջմտա, ծանոթությամբ, թե «Միայն այն է, որ յ տառը լավ չի երևում»¹¹։ Հնագրական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ փորագրողը յ-ի սյունագիծը վերին մասում փոքր ինչ երկարացրել է (համաժ. 7-րդ տողի յմօ բառը), որի պատճառով ձախում ունեցած բոլորվող ելուստը տառի գրեթե միջամաս է իջել, մասամբ նմանվելով Յ-ին։ Բայց հաստատապես յ է։ Ինչպես երևում է, վերծանողներն այն իբրև ծ են ընդունել, ելնելով իրենց ձեռքին եղած լուսանկարի պատկերից, ուր ուղիղ սյունագծի վերևում մամուկտորը իբրև փորվածքի ստվեր է երևում։ Շփոթին որոշ չափով նպաստել է և հետևյալ պարագան. արձանագրության մեջ բառանշատիչ երկկետից հետո սովորական միջոց-տարածք է թողնվում, իսկ մեզ զբաղեցնող բառի սկզբում այն մի քիչ ավելի է, ուստի ենթադրվել է, թե տառ պետք է լինի։ Իրականում գրված է յ տա¹²։

Տող 5. Միանգամայն ապացուցված նկատելով [ոյ]ու վերականգնումը, պիտի արձանագրենք, որ փաստորեն չվերծանված է մնացել հաջորդ բառը։ Նշված հրապարակման մեջ կարդում ենք. «Հետո (իմա՝ օյու-ից հետո—Պ. Մ.) երկու թե երեք գիր է անորոշ և ապա՝ որոշակի է Նա, և դժվար է ասել, թե

ձայնավորների ուղղագրությունը (Հրաբեր. 1972, № 4, էջ 53—54), համաժ. Մ. Ավագյան, Վիմական արձանագրությունների հնչյունաբանություն, Երևան, 1973, էջ 359—363)։ Գ>ը-ի համար (8—9) համաժ. հյ. սարկալագ—սարգալաք։ Եթե ձայն է դրված և Գրայրի 1279 թ. արձանագրության մեջ։

⁹ Վրացերեն լեզվի անցման շրջանի արդյունք է ՄՅՅ-բայական նախածանցի փոխարեն ՄՅ-ունենալը (Նրանց մասին տես Վ. Գ. Գ. Մանուկ, Երևան, 1953, 83. 254—255)։

¹⁰ Բնագրում իրոք -եյ է, և լավ է, որ վերծանության մեջ իբրև ՆՅ չի ընդունվել։

¹¹ Վ. Մանուկ, Նշվ. աշխ., էջ 23։

¹² Վերծանողների ջմտա ընթերցումը մոծված է և է. Մաճավարիանիի՝ լուսանկարից կատարված գրչանկար։



[illegible]

6. լոտեսա տղեսա ցեց ցոնց օց/օցց մ(ց)ց(ո)ծ(ա)սա լոմոց(ո)ս(ա)տա
7. մ(ց)ց(ո)ս(ա)սա. լա/մ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա
8. ց(ա)մո մոցց(ո)ս(ա)սա, ր(ո)մոց լա/լոց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա
9. ց(ա)մո մոցց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա լ(ց)ց(ո)ս(ա)սա. օ(մո)ն.

Թարգմանություն. Ես իվանն Աբուլքի որդիս՝ աթաբեկս և ամիրսպասալարս, Դմանիսը վերցրի և բերդ կառուցեցի ու կիրը հետս բերի: Այս երկիրը երկար ժամանակ ավեր ու անապատ էր. չորս ամսում սույն բերդը կառուցեցի՝ Դիմիտրեն արքայի թագավորության օրոք: Եվ մեզանից հետո աստված ձեզ այնպիսի ժամանակ տա, որ ձեր կայանը բաղդադ դառնա՝ Դիմիտրենի հավատարմության ներքո: Ամեն:

Սույն արձանագրությունը ուրիշ շատերից ամենից առաջ տարբերվում է իր, այսպես ասած, գործնականությամբ. նրանում բանաձևային ու ավանդական ոչինչ չկա, և իրագործություն-հղելությունների թվարկված են խիստ որոշակի շարադրանքով: Միակ «ավանդական» թվական չունենալն է, որ հարկադրում է լրացուցիչ քննություն կատարել՝ ընձեռած տվյալները լիարժեք դարձնելու համար¹⁵: Զարմանալի զուգահեռությամբ, XII—XIII դդ. վրաց պատմության մեջ երկու Դիմիտրեն թագավոր կա (1125—1156 և 1270—1289 թվականներ) և երկուսի օրոք էլ Աբուլքի որդի է հղել¹⁶, նրանցից առաջինի մասին որոշ վկայություն քաղում ենք «Լաշա-Գեորգիի ժամանակվա մատենագրի» երկից, ըստ որի «Իր թագավորության քսաներորդ տարում» «Դիմիտրեն Աբուլքի որդի Իվաննի գլուխը հատեց»¹⁷ (1125 + 20 = 1145 թ.), «Թագակրաց պատմությունն ու ներքողանը» աղբյուրից տեղեկանում ենք, որ այս Իվանն նշանավոր (շամոհեմեդ) անձնավորություն է հղել, որին փախստյան է մատնել թուրք Կուլը կամ նրա հայրը¹⁸, Վարդանը նրա մասին պատմում է, թե «Իսկ թագաւորն (Իմա Դավիթ Շինարարը — Պ. Մ.) զԱբուլքի, և զորդին իւր զԻւանէ թողեալ ի յԱնի դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպստար որդւովք իւրովք, որք անդէն մեռան և ոչ ևս դարձան»¹⁹, Այդ նույն «Ապստարի» որդիներից մեկն էր Փաղունը, որ «Իբրև լուաւ... զմահն Դավթի, գայ ի խնդիր հայրենի քաղաքին Անույ, և աղերսաւնօք խնդրէ զԱպուլքիէ և յաւագաց քաղաքին, և զի կայր քաղաքն ի մեծի վտանգի ի թուրքաց, ետ ի նա Ապուլքի խնայելով ի քրիստոնեայսն, ևս առաւել յորդին իւր Իւանէ, զի մի՛ կորիցէ ի յաճախ մարտիցն, Եւ ինքն անցեալ գնայ ի տուն իւր»²⁰,

15 Ակադ. Ա. Շանիձեի համոզմամբ՝ «Տեղի չգոյությունը պետք է բացատրել, որ վերջում սպասելի քրոնիկոնը չի դրված» (նույն տեղում, էջ 24): Թերևս ընդունելի պատճառաբանություն է, եթե հաշվի չառնենք, որ բազմաթիվ այլ արձանագրություններ ևս թվական չունեն, իսկ գրելու տեղ՝ կամեցածի չափ:

16 Աբուլքի որդի (և ոչ՝ Աբուլքիսան) գրելու պատճառն այն է, որ այդ ազգանունը մեր մատենագրությանը ծանոթ է հիշյալ ձևով: Հայերենի համար առավել ընտանի կլինեի Աբուլքյան գրել (հմտ. Գրիգոր Արասա որդի—Արասյան), բայց այս էլ ավելորդ թուրիմացության տեղիք կարող էր տալ «Աբուլքյան» գրում ենք տոհմի մասին խոսելու:

17 Ժ. Գ. I, 367: Ակադ. Ն. Բերձենիշվիլին XI—XII դդ. Աբուլքյան տոհմի տիրույթ է նկատում Մուխրան-Ջեղազենը (ս.ժ. ՈՍԾ. Սճոտեցծո, I, 52): Նույն գիտնականի համոզմամբ, Դավիթ Շինարարը, այլ նախարարական տների թվում, կոտրել է և Աբուլքյանների հպարտությունը (նշվ. աշխ., II, 41): Թե ինչ աղբյուրներ կան նման հզորացությունների համար, մեզ հայտնի չէ:

18 Ժ. Գ., II, 7.

19 «Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 119:

20 Նույն տեղում, էջ 120:

նու միւս իւանէ՝ Արուսեայի որդին, զԴմանիս³⁶։ Որ այս տեղեկությունը հավաստի է՝ ապացուցվում է նաև Վարդանի վկայությամբ, որի մոտ կարդում ենք. «Ի հինդ հարիւր եօթնասուն և ինն թուին հուրթի, որդի Կզին, գայ ի Դուին և տիրէ... Ի նոյն ժամանակաց ոչ հեռագոյնս ինչ՝ որդին Ապուլեթի Իւանէ կամեցաւ սպանանել զԴեմետրէ և զեղբայրն իւր զԳորգի, և հայր նորա Ապուլէթ ճողելով զալիսն իւր առաջի որդւոյն՝ արգել գնաւ։ Եւ էին երկոքեանն արդելեալք ի բերդն Դմանիս պատճառանօք ինչ խարէութեան ի մէջ եղբարցն, զոր աւսա իմացեալ Դեմետրէ...»³⁷։

Իվ. Զավախիշվիլին հանգամանորեն անդրադարձել է այս տեղեկությանը և ապստամբության ժամանակը որոշել 1132—1145 թթ. մոտավորությամբ³⁸։ Իվանեն մինչ այդ, 1131 թ. արշավել էր Գառնի, սակայն «ի գալ միւս ամին սպանաւ Իվանէ ի Դեմետրէ[է] նենգիւ», իսկ նրա որդի Թիրքաշը գնաց Շահ-Արմենների մոտ, Արշարունիքի կառավարիչ նշանակվեց և «աւերէր զտունն վրաց մեծաւ քաջութեամբ», մինչև որ վրաց թագավորի կողմից բռնվեց ու բանտարկության ենթարկվեց (բանտից ազատվեց 1156/57 թթ. Դիմիտրիին փոխարինած Դավթի ձեռքով, որը «դնէ զօրագլուխ, և զկնի ամսոյ միոյ մեռանի») ³⁹։ Այստեղից պարզ է, որ 1130—40-ական թվականներից հետո Դմանիսը այլևս Արուսեայաններին չէր պատկանում։

Նորագույն ուսումնասիրությունների համաձայն, 1244 թ. այստեղ էր տեղափոխվել փողերանոցը («զարափխանան»)։ Ակադ. Գ. Մերեթելին ճշգրտեց, որ վրաց Դավթի թագավորի անունը կրող և քրոնիկոնի 465-ին (=1245) հատված դրամի վրա Դմանիս է գրված և ոչ՝ Թիֆլիս⁴⁰։ Այս նշանակալից փաստը, պեղումների շնորհիվ հայտնաբերված նյութական մշակույթի տվյալների համադրությամբ⁴¹, վկայում է, որ Դմանիսը XIII դ. կեսերին նշանավոր առևտրական-արհեստագործական, մշակութային ու տնտեսական կենտրոն է եղել, նրկատելի դեր խաղացել երկրի կյանքում⁴², ուստի նրա՝ ձեռքից-ձեռք կամ տոհմից-տոհմ անցնելը պայմանավորված է ազդեցությունների կամ հակամարտությունների շեշտակի վերավարումներով։ Քաղաքի պատմությամբ զբաղված գիտնականների համոզմամբ՝ Դմանիսը բարգավաճման բարձրակետի հա-

³⁶ Ստ. Օրբելյան, էջ 380, Շարունակության մեջ Օրբելյանը Դիմիտրիի մահը դնում է 607 թ., որ, հավանաբար, գրչական վրիպման արդյունք է, սպասելի էր՝ 605 (շփոթված են՝ 5 և է)։

³⁷ Վարդան, էջ 122։ Դ. Ալիշանը սխալմամբ Արուսեային ու Իվանին համարել է Օրբելյան տոհմի ներկայացուցիչներ (տե՛ս Վարդան, էջ 119, ծան. 2 և ցանկ)։

³⁸ Ո. Յ. Ջաջեանի Մցիլո, նշվ. աշխ., հ. II, 223—224։

³⁹ Վարդան, էջ 123 և 126։ Չափազանց ուշադրով է ձեռագրերի մի խմբի կատարած հավելումն այս մասում. «Ժմանք ասեն ի դաւելու Օրբելանց ի Սմբատայ և յԻւանէէ, վասն ի տեղի նոցա դնելու զԹիրքաշն, բանս եղեալ ընդ Դէորդայ եղբոր Դաւթի՝ զնոսա գնել զօրավարս (նշվ. հրատ., էջ 126)։

⁴⁰ Դրամի նկարագրությունը տե՛ս Е. А. Пахомов, Монеты Грузии, Тб., 1970, стр. 125 (հմտ. էջ 308), քննությունը՝ Գ. Մցրեթելի, ժմանիսի մոնետիս ցամո, «ლიტ. ძიგადნი», II, 1944.

⁴¹ Նրանց ուսումնասիրությունը տե՛ս Լ. Մ. Մեսխիա, ժմանիսի (ձալաթիս օստրոն և ձալաթարիս օլթրոն), Մ. Դուստաբեկի ցաթիսի մատրիալալուրի ցուլտրա, տծ., 1938; Ե. Մ. Իսխրաժե, քարտուլի մնատրուլի ցրամօյա XI—XIII სს. (ժմանիսի անցոծանի ցրամօյա), տծ., 1953; А. Банк, Керамика из Дманиси и Херсонеса. «Памятники эпохи Руставели». Л.-Д., 1938.

⁴² Հարցի քննությունը տե՛ս Ш. Месхиа, Города и городской строй феодальной Грузии (Тб., 1959) գրքում։

սավ հատկապես Ուլու Դավթի թագավորության տարիներին, 1250—70-ական թվականներին⁴³, 1261 թ. աթաբեկ և ամիրսպասալար դարձած Իվանն Աբուլիսի որդին եթե Ուլու Դավթից Դմանիսն իբրև իրենց երբեմնի «հայրենիք» ետ ստանար, ապա Բարանայի արձանագրության մեջ «վերցրի» (წაგვრე) ասելու անհրաժեշտություն չէր ունենա: Եվ առհասարակ՝ թագավորը այդպիսի գիշում հս.զիվ էլ թե աներ: Նշանակում է՝ Իվանն պատեհ առիթի է սպասել, որպիսին ներկայացել է Ուլու Դավթի մահվամբ, «որ պակասեաց ի 719 (=1270) թուականին»⁴⁴, եվ ահա, մինչ նշանավոր դիդերուլները զբաղված էին նոր թագավոր ունենալու մտահոգությամբ, Իվանն գրավում է Դմանիսը, այնտեղ բերդ կառուցում: Այդ ամենը տեղի կարող էր ունենալ 1271—1272 թվականների արանքում: Այժմ արդեն հասկանալի է դառնում, թե ինչու Դիմիտրեն նրան զրկեց աթաբեկությունից, այն շնորհիվ Սագուն Մահկանաբերդցուն: Որևէ հիմք չկա ենթադրելու, թե Իվանն ընդդիմացել է Դիմիտրի թագավորություն ստանալուն, թեև նրա անունը լսելի չէ պատանի թագավորացուն Հորդա և այնտեղից ետ ուղեկցողների մեջ: Նա պարզապես ետ է վերցրել հարքունիս գրավված Դմանիսը, հավանաբար իր շրջակայքով: Դատելով Բարանայի արձանագրության «չորս ամսում սույն բերդը կառուցեցի՝ Դիմիտրե արքայի թագավորության օրոք» և «մեզանից հետո աստված ձեզ այնպիսի ժամանակ տա, որ ձեռ կայանը բաղդաղ դառնա՝ Դիմիտրեի հավատարմությանը ներքո» արտահայտություններից, 1272 թ. նա դեռ աթաբեկ էր և նորընծա թագավորին ծառայելու պատրաստակամություն ուներ⁴⁵: Բայց սկզբնաղբյուրներից գիտենք, որ խանը Դիմիտրեն թագավորություն տալով՝ նրա «հետ ուղարկեց Սաղունին», որի «ձեռքում էր [թագավորը], որովհետև խանը Սագունին հույժ գորացրեց: Դիմիտրե թագավորի իրավասությունից հանեց Թելավն ու Բելաքանը, շատ [այլ] երկրներ, և Սագունը բարվոք վարում էր Վրաստանի գործերը»⁴⁶: Ժամանակագրի տեղեկությունից երևում է, որ իր թագավորության սկզբնական շրջանում պատանի Դիմիտրեն գրեթե չէր մասնակցում երկրի կառավարման գործերին և որոշ ժամանակ անց միայն, «երբ մեծացավ Դիմիտրե թագավորը, սկսեց հաջողությամբ վարչական գործեր կառավարել»⁴⁷: Ուրեմն, Իվանն Աբուլիսի որդու հիմնական ախույանը նրա աթաբեկությունն ու ամիրսպասալարությունը խլած Սագուն Մահկանաբերդցին էր: Մինչև հիմա պարզ չգիտենք, թե ի՞նչ շահագրգռությամբ վերջինս դրդեց թաթարներին՝ անթիվ գումար պահանջել թաղավորից և պայման առաջադրեց. «եթե կտաս ինձ Դմանիսը, ես կտամ խանին գումարը»: Դիմիտրեն ուրիշ ելք չէր մնում, քան

⁴³ Լ. Յոսեֆովիչ, Նշվ. աշխ., էջ 389, հոմա. Գ. Յանոնով, Նշվ. աշխ., էջ 14:

⁴⁴ Ստ. Օրբելյան, էջ 424, հոմա. Ո. Ջ. Ջանջևանով, Նշվ. աշխ., III, 188:

⁴⁵ «Զեր կայանը բաղդաղ դառնա» օրհնության մեջ առաջին անգամ է վկայում «բաղդաղ լինի», «բաղդաղ դառնա» դարձվածքի գոյությունը միջնադարում: Որ այն իրոք բարձրագույն, բարձր վիճակ է նշանակում՝ ապացուցվում է Իջևանի շրջանի որոշ գյուղերում հարատևող առաքվածքներով. «Բաղ չի հուր րաղդաղ ա», «Ամենքի հայրենիքը իրան համար լաղդաղ ա» (գ. Աշաշուր, վկայել է աղբյուրագիտության ասիստենտ Զ. Մանուկյանը), Վրացական աղբյուրներում կա բանաձևային այսպիսի արտահայտություն. Յոսեֆովիչ, Ո. Ջ. Ջանջևանով, Նշվ. աշխ., III, 202): «ձեռքում լինում» և «բաղդաղ» բառերը կիրառության առումով նույնանիշ են:

⁴⁶ Վրաց ժամանակագրություն, էջ 140 և 142:

⁴⁷ Նույն տեղում, էջ 141:

«լսեց թագավորն ու ակամա տվեց Դմանիսն ու նրա շրջակայքը»⁴⁸։ Սագունը ձեռք է բերում ոչ միայն Իվանեի պաշտոն-բարձը, այլև տիրույթը՝ Դմանիսն ու շրջակայքը, որին նա մեկ-երկու տարի առաջ էր տիրացել։ Դժվար է ասել, Դիմիտրեն հիշյալ քաղաքն ու գավառը Սագունին զիջեց իբրև արքունապատկա՞ն, թե՞ ստիսլված համաձայնություն տվեց, որ Սագունն այն գրավի պաշտոնանկ Իվանեից։ Երկպառակությունն այնտեղ հասավ, որ Իվանեն ու նրա եղբայրը հարկադրված եղան փախչել երկրից, սկզբնաղբյուրի բառացի վկայությամբ՝ Սագունից, և ապավինել Ռումի կառավարիչ Ղոնղրաթային։ Ինչպես վերևում տեսանք, այս փախուստն իսկ չփրկեց նրանց։ Ահմադ Թեկուդարն ու Սագունի որդի խուլուբուզան վրեժխնդիր եղան և սպանեցին 1284 թ.։ Մեր ընդգծած «Դմանիսն ու նրա շրջակայքը» արտահայտությունից հետևում է, որ իրականում Իվանեն գրաված է եղել ո՛չ միայն քաղաքը։ Թե շրջակայքը ասելով ինչ մեծությամբ տարածք պետք է հասկանալ՝ սկզբնաղբյուրներով դեռ չի ճշտվում, բայց այլևս կասկածից դուրս է, որ մեր արձանագրության գտնված տեղը՝ Բարանան, ուր Իվանեն չորս ամսում բերդ է կառուցել» (իմա՝ պատմական Կողբոփոր գավառի կենտրոնը)⁴⁹, մտել է այդ «շրջակայք» մեջ։

Այս անցքը, ինչ խոսք, չէր կարող 1271—1272 թթ.⁵⁰ տեղի ունենալ, ինչպես ենթադրվել է, որովհետև, Ստ. Օրբելյանի տեղեկությամբ, 1272 թ. նա թագստացավ, իսկ Դմանիսն ու շրջակայքը Սագունին զիջեց մի քանի տարի բաբխնամությամբ կառավարելուց, «ավերված երկիրը շինացնելուց» հետո, երբ «Հորդա գնաց»⁵¹։ Կարծում ենք, իրավացի պիտի լինի ակադ. Իվ. Զավախիշվիլին, երբ սույն եղելությունը 1278 թ. է վերագրում⁵²։ Թերևս 1273—1278 թթ. միջև ընկած շրջանում Դիմիտրեն արքունիքին էր վերադարձրել Իվանեի գրաված Դմանիսը, սակայն չկարողանալով ընդդիմանալ Սագունի ճնշմանը՝ ներան հանձնեց։ Շուրջ 20 տարի անց, 1295 թ. Դավիթ VI-ին հաջողվեց ետ ըստանալ այդ քաղաքը Սագունի որդի խուլուբուզայից՝ Թուքալ Նոյինի աջակցությամբ⁵³։

Իվանե Աբուլեթի որդու արձանագրության մեջ կա պատմական առումով ուշագրավ և լրացուցիչ քննություն պահանջող մեկ հատված ևս. խոսելով Կողբոփոր գավառի մասին, ուր ինքը բերդ է կառուցել, նկատում է. «Այս երկիրը երկար ժամանակ ավեր ու ահարկու էր»։ Առկա սկզբնաղբյուրներից որևէ տեղեկություն հայտնի չէ, թե հիշյալ գավառը ե՞րբ և ո՞ւմ կողմից էր ավերածության ենթարկվել, նույնիսկ «ահարկու» դարձել։ Ենթադրելի է, որ մոնղոլները ապստամբ համարած և «անդամ-անդամ յօշած» Զաքարիայից վրեժխնդիր լինելու համար կարող էին ասպատակության ենթարկել նրա որոշ տիրույթներ, որոնց թվում, հավանաբար, եղել է և Կողբոփորը։ Եթե այս ենթադրությունը իրավացի է, ապա «երկիրը» շուրջ մեկ տասնամյակ (1261—1271) մնացել է ավերված վիճակում, զրկված երբեմնի զորեղ նախարարական տան խնամակալությունից։ Իվանեն այդ տասնամյակը կարող էր «երկար ժամանակ» հա-

⁴⁸ Նույն տեղում, էջ 142։

⁴⁹ Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի», Երևան, 1963, էջ 59—60։

⁵⁰ Մ. Ե. Ս. Երեմյան, Նշվ. աշխ., էջ 14—15։

⁵¹ Վրաց ժամանակագրություն, էջ 142։

⁵² Ո. Յ. Ջաջանիճյան, Նշվ. աշխ., էջ 220։

⁵³ Վրաց ժամանակագրություն, էջ 164։

մարել, իր շինարարական գործունեությունը շեշտելու համար: Այս ամենից կարելի է նույնիսկ եզրակացնել, թե Կողրուփոր գավառին կամ նրա Կողբ-Կողբաքար կենտրոնին ռազմական ու տնտեսական առումով մեծ կարևորություն է տրվել, ուստի մոնղոլները այն ավերել են իշխանական տան գործությունը կոտրելու թելադրանքով, իսկ իվանեն շտապել է «չորս ամսում» բերդ կառուցել՝ նոր ձեռք բերած երկրում պատվար ունենալու և ամրանալու համար: Սակայն մեր այս բացատրությունը նկատելիորեն պայմանական է, որովհետև «ավեր ու ահարկու» արտահայտությունը կարող է վերաբերել և բնական աղետներից առաջացած իրավիճակի: Հայտնի է, որ 1219 թ. «եղև շարժ ահագին, և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ ի Մշակալանս ի մետասան յունուարի, ի ժամ ճաշոյ, և չորս պատարագող ընդ մեծ զենմանն նուիրեցան»⁵⁴, Հիշյալ Մշակալանքը Բարանայից հեռու չէ⁵⁵ և հնարավոր է, որ այդ երկրաշարժից տուժել էին և այլ կառույցներ, ներառյալ բերդ-ամրոցը: Իվանեն հազիվ թե չորս ամսում իսկապես նոր բերդ կառուցել հասցնեիր, թերևս նա վերականգնել է ավերվածը, ինչպես հաճախ պատահում է ուշ շրջանում, «նորոգելը» «կառուցել» անվանելով:

ГРУЗИНСКАЯ ЭПИГРАФИКА В АРМЕНИИ

Колбака р (Барана)

П. М. МУРАДЯН

Резюме

В 1963 г. недалеко от центра Ноемберянского р-на, в местности Барана, эпиграфической экспедицией АН Арм. ССР (рук. С. Г. Бархударян) была найдена грузинская надпись, чтением которой впоследствии занялись А. Г. Шанидзе и В. Цискаришвили. Результаты их работ вместе с путевыми заметками А. Г. Шанидзе опубликованы в 1968 г., в XI выпуске «Трудов кафедры древнегрузинского языка» Тбилисского государственного университета.

Палеографическое исследование надписи (ныне находится в Гос. ист. музее Арм. ССР) позволило внести некоторые коррективы в предложенное ранее чтение, уточнить сомнительные места, а также прочесть нерасшифрованные слова. В установленном виде надпись гласит: «Я, атабек и амирспасалар Иване Абулетисдзе, отнял Дманис и построил крепость, а известь сюда привез с собой. Этот край долгое время был запущен и страшен; в царствование царя Дмитрия за четыре месяца я воздвиг эту крепость. После нас пусть даст вам бог такое время, чтобы постоял ваш в верности царю Дмитрию превратился в багдад. Аминь».

Надпись датируется 1272/1273 гг.— после воцарения Дмитрия II, но до получения Садуном Маћканабердским титула атабека. В сопоставлении с другими армянскими и грузинскими источниками надпись позволяет выявить новые моменты в истории Абулетидов, Захаридов и Арцрунидов Маћканаберда.

⁵⁴ Վ ա Ր գ ա ն, էջ 142:

⁵⁵ Մ. Բ ա Ր խ ու ղ ա Ր ե ա ն ջ, Արցախ, Բազու, 1895, էջ 384—387, հմմտ. «Արձագանք», 1888, էջ 160—161, Հ. Ո ս կ լ ա ն, Արցախի վանքերը, Վիեննա, 1953, էջ 241—244: